ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ

Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեի նախագիծը մշակվել է <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Դիլիջան համայնքի 2022թ. բյուջեն կանխատեսվում է՝

Եկամուտների գծով՝ 1067888.0 հազ.դրամ
Ծախսերի գծով՝ 1067888.0 հազ.դրամ
Դեֆիցիտը/պակասուրդը/ -- հազ.դրամ

1. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1067888.0 հազ.դրամ, Դիլիջան համայնքի 2021թ. բյուջեով հաստատված 1027000.0 հազ.դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2021թ. փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներին 40888.0 հազ.դրամով կամ շուրջ 3.98 տոկոսով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 381508.2 հազ.դրամ՝ 2020թ. հաստատված 340018.7 հազ.դրամի դիմաց կամ 41489.5 հազ.դրամով ավելի:

1.1) Հարկեր և տուրքեր

Հարկային եկամուտները և տուրքերը 2022 թվականի համար բյուջեի նախագծով ծրագրվել են 201913.0 հազ.դրամ՝ ընթացիկ տարվա 153904.3 հազ.դրամի դիմաց

Ա. Գույքահարկը նախագծով նախատեսվել է 84928.0 հազ.դրամ 2021թ. համար հաստատված 94092,3 հազար դրամի դիմաց:

Բ. Հողի հարկը նախագծով նախատեսվել է 12285.0 հազ.դրամ 2021թ. համար հաստատված 41217,6 հազար դրամի դիմաց:

Գ. Անշարժ գույքի հարկը նախատեսվել է 81919,0 հազ.դրամ:

Դ. Տեղական տուրքերը ծրագրվել են 17382,0 հազ.դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 13494,4 հազ.դրամի դիմաց:

Ե. Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2022 թվականի համար նախագծով ծրագրվել են 5400,0 հազ.դրամ՝ 2020 թվականի հաստատված 5100,0 հազ.դրամ ցուցանիշի դիմաց:

1.1) Պաշտոնական դրամաշնորհներ

Հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել է 681475,5 հազ.դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որը 4995,2 հազ.դրամով ավել է 2021թ. սահմանված ՀՀ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից:

Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային Հատկացումների /սուբվենցիաների/ գծով նախատեսվել է 2021թ. չափով՝ 4904,3 հազ.դրամ:

1.2) Այլ եկամուտներ

Այլ եկամուտները 2022թ. նախագծով նախատեսվել է 177595,2 հազ. Դրամ, 2021թվականի համար հաստատված 186113,5 հազ.դրամ ցուցանիշի դիմաց:

Ա.համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 18930,0 հազ.դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 18793,0 հազ.դրամի դիմաց:

Բ.համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 19735,0 հազ.դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 17787,3 հազ.դրամի դիմաց:

Գ.այլ գույքի վարձակալությունից մուտքերը ծրագրվել են 15439,5 հազ.դրամ՝ 2021 թվականի բյուջեով նախատեսված 15172,0 հազ.դրամի դիմաց:
Գույքի վարձակալությունից եկամուտները ծրագրվել են հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումները, լուծված և նոր կնքված պայմանագրերը, ինչպես նաև նախորդ ժամանակաշրջանից գոյացած ապառքները:
Ե.տեղական վճարների գծով ծրագրվել է 114196,0 հազ. դրամ, 2021 թվականի համար հաստատված 116886,0 հազ.դրամ ցուցանիշի դիմաց: Տեղական վճարների գծով ցուցանիշները ծրագրվել են հիմք ունենալով ավագանու կողմից սահմանված Դիլիջան համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, աղբահանության կազմակերպման համար սահմանված դրույքաչափերը, ինչպես նաև ներհամայնքային տրանսպորտի ծառայությունից օգտվելու համար սահմանված տեղական վճարների չափը: Դիլիջան համայնքի տարածքում սահմանել է 7500.0 հազ.դրամ եկամուտ ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների վճարներից, տեղական վճարներ է սահմանվել համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 33580,0 հազ.դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության /Գեղարվեստի դպրոց/ հաստատությունների ծառայությունից օգտվողների համար՝ 11000.0 հազ.դրամ, համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ 1500.0 հազ.դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ 3000.0 հազ.դրամ, համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 37786,0 հազ.դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց՝ 13310,0 հազ.դրամ, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 720.0հազ.դրամ, անշարժ գույքի հասցեավորման համար՝ 1800,0 հազ.դրամ և համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 4000,0 հազ.դրամ:
Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 5000,0 հազ.դրամ, իսկ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով՝ 4000.0 հազ.դրամ:

2. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Դիլիջան համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 1517888,0հազ, դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 70,3 տոկոսը կամ 1067888,0 հազ.դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե) և 450000,0 հազ.դրամ կամ 29,7 տոկոսը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին((ֆոնդային բյուջե):
Նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի՝ (կրթություն,սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 41.2 տոկոս, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված է ծախսերի 11.2 տոկոսը, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 5.8 տոկոս: Մշակույթին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 8.9 տոկոս Կառավարման մարմնի պահպանման ծրագրով նախագծում ծախսերը կազմում է ընդհանուր ծախսեևի 20.0 տոկոսը: Նախատեսվել է նաև պահուստային ֆոնդ 54500.0հազ.դրամի չափով (վարչական եկամուտների 5.0 տոկոս):
Դիլիջան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով ծրագրված ծախսերը՝

1. Կառավարման ապարատի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Այս ծրագրով նախագծում ծախսերը կազմել են 267022.0 հազ.դրամ, ինչը 2021թ. համապատասխան ցուցանիշից

ավել է 56884.0 հազ.դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 219424.5 հազ.դրամ, որը 2021թ. ցուցանիշից ավել է 46724.5 հազ.դրամով: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկն իրականացվել է Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա, որով նախատեսված է 66 հաստիք: Աշխատավարձի ֆոնդը ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկի վճարման համար: Աշխատակիցներին խրախուսելու համար նախատեսված է նաև խրախուսման ֆոնդ աշխատավարձի ֆոնդի 28.3 տոկոսի չափով: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որը հաշվարկվել է հիմք ընդունելով նախորդ 3 տարիների փաստացի ծավալների միջին ցուցանիշը: Մասնավորապես այս հոդվածով նախատեսվել է 7630,0 հազ.դրամ, 2020թ. բյուջեով ծրագրված ցուցանիշի չափով: Կոմունալ ծառայությունները իրենց մեջ ներառում են ջրամատակարարման, ջրահեռացման ծախսերը և ծրագրվել է 3500,0 հազ.դրամ 2020թ. 2680,0 հազ.դրամի դիմաց, կամ ավել 820.0 հազ.դրամով: Կապի ծառայությունները ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի և ինտերնետային ծառայությունները:Այս հոդվածով նախատեսվել է 3624,0 հազ.դրամ: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 944.0 հազ.դրամ, նկատի ունենալով համայնքապետարանում հաշվառված ավտոմեքենաների քանակը և հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Գույք և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 420.0 հազ.դրամ, ներառում է 1 գյուղական բնակավայրի վարչական ղեկավարների ծառայողական մեքենայի վարձակալությունը: Գործուղման ծախսեր է նախատեսվել 660.0 հազ.դրամ: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 600,0 հազ.դրամ՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի և այլ լրատվական ծառայությունների ձեռք բերման համար: Ներկայացուցչական ծախսերի գծով ծրագրվել է 1000.0 հազ.դրամ, գումարը նախատեսվել է պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների, ինչպես նաև համայնքապետարանի ներկայացուցչական ծախսերի իրականացման համար: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 2558.0 հազ.դրամ: Այն ներառում է ծառայողական մեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրված են 2020թ. գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները: Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 1890.0 հազ.դրամ, հաշվարկվել է հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 10960.0 հազ.դրամ, հաշվարկվել է համայնքապետարանի և 3 բնակավայրերի ավտոմեքենաների թվաքանակով: Կենցաղային և հանրային սննդի նյութերով ծրագրվել է 1812,0 հազ.դրամ, նախատեսվել է համայնքապետարանի կարիքների համար կենցաղային նյութերի և այլ ծախսերի համար: Նախատեսվել է նաև 2000,0 հազ.դրամ հատուկ նպատակային այլ նյութեր ձեռք բերելու համար: Վարչական սարքավորումների գծով նախատեսվել է 3000.0 հազ.դրամ, որպեսզի անհրաժեշտության դեպքում աշխատակազմի համար ձեռք բերվի գույք և տեխնիկա: ԵԿ 2000.0 հազ. դրամ նախատեսվել է տրանսպորտային սարքավորումների ձեռք բերման համար:

2. Ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրով ծախսերը նախատեսվել են 4933,6 հազ.դրամ, որն իր մեջ ներառում է Տեղեկատվական ծրագրերի և հանրային հատվածի հաշվապահության և հանրային այլ ծառայությունների կազմակերպմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումը, կառավարչական ծառայություններին:
3. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 8466.0 հազ.դրամ գումար,որն իր մեջ ներառում է համայնքային գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումները, ինչպես նաև դատարան ներկայացվող դիմումներ, հայցադիմումների համար սահմանված վճարումներ :
4. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն ծրագրով նախատեսվել է 300.0 հազ. Դրամ զորակոչին նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելու համար:
5. Տրանսպորտի ոլորտում ծրագրվել է 110600,0 հազ.դրամ: 46000.0 հազ.դրամ նախատեսվել է ճանապարհների հիմնանորոգման համար, 52000.0 հազ.դրամ սուբսիդավորում ներհամայնքային

հասարակական տրանսպորտի գործունեության կազմակերպման համար: 12600,0 հազ.դրամ գյուղական բնակավայրերի ճանապարհների ընթացիկ պահպանման համար

6. Զբոսաշրջության ծրագրով նախատեսվել է 1000.0 հազ.դրամ տեղեկատվական և գովազդային ծառայությունների ձեռք բերման համար, 1500.0 հազ.դրամ ներկայացուցչական ծախս է ծրագրվել զբոսաշրջության միջազգային օրվա հետ կապված միջոցառումների կազմակերպման համար: Նախատեսվել է նաև 700.0 հազ.դրամ դրամաշնորհ:
7. Աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսվել է 106568,0 հազ.դրամ, Դիլիջան քաղաքում և 6 բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման համար: 5900,0 հազ.դրամ համայնքի տարածքում շաբաթօրյակների կազմակերպման և կանաչապատման աշխատանների համար:
8. Ջրամատակարարման ծրագրով նախատեսվել է 3000.0 հազ.դրամ գյուղական բնակավայրերում ջրամատակարարման համակարգի ընթացիկ պահպանման համար:
9. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 40800.0 հազ.դրամ, ներկայումս համայնքում առկա ցանցի պահպանման համար:
10. Բնակելի շենքերի պահպանման ծրագրով նախատեսվել է 250972,0 հազ.դրամ, որից 234000,0 հազար դրամը 11 բազմանբնակարան բնակելի շենքերի վերանորոգմանը և էներգաարդյունավետ արդիականացմանը, իսկ 16972,0 հազ.դրամ սուբսիդիա Բնակարանային տնտեսություն համայնքայի ոչ առևտրային կազմակերպությանը 105 բազմաբնակարան բնակելի շենքերի ընթացիկ պահպանման համար:
11. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 29195,0 հազ.դրամ «Գրադարան» ՀՈԱԿ-ին սուբսիդիա տրամադրելու համար:
12. Թանգարաններ և ցուցասրահներ ծրագրով նախատեսվել է 29997,0 «Երկրագիտական թանգարան»ՀՈԱԿ-ին սուբսիդիա տրամադրելու համար:
13. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրով նախատեսվել է 183490,0 հազ.դրամ , որից 18490,0 հազ.դրամ «Մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ին սուբսիդիա տրամադրելու համար, իսկ 165000,0 հազ.դրամ մշակույթի պալատի շենքի հիմնանորոգման համար:
14. Համայնքային մշակութային միջոցառումներ կազմակերպելու ծրագրով նախատեսվել է 3500.0 հազ.դրամ:
15. Հրատարակչություններ, խմբագրություններ ծրագրով նախատեսվել է 342.0 հազ.դրամ համայնքային «Դիլիջան» թերթի տպագրության համար:
16. Նախադպրոցական կրթություն ծրագրով նախատեսվել է 296205.0 հազ.դրամ, 2021թ. Բյուջեով հաստատված 294205,0 հազ.դրամի դիմաց կամ 2000.0 հազ.դրամ ավել: Հաշվարկի հիմքում դրվել է մեկ երեխայի ամսական ուսուցման ծախսերի միջին ինքնարժեքը և ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը:
17. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 112297.0 հազ.դրամ, ինչն ուղղված է 3 համայնքային արտադպրոցական հիմնարկների պահպանմանը:
18. Սոցիալական աջակցություն նորածինների ընտանիքներին ծրագրով նախատեսվել է 12500.0 հազ.դրամ, աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին՝ 5500.0 հազ.դրամ և 7000,0 հազ,դրամ Դիլիջան համայնքում 2022թ. ընթացքում ծնված երեխաների ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար

Տարեսկզբի ազատ մնացորդը կճշգրտվի 2021թ. բյուջետային տարվա ավարտից հետո և համայնքի ավագանու որոշմամբ կօգտագործվի տվյալ տարվա բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման կամ չկանխատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով:

Դիլիջան համայնքի 2022թ, բյուջեի նախագիծը դեկտեմբերի 14-ից հանրային քննարկման համար տեղադրվել է dilijancity.am կայքում, դեկտեմբերի 27-ին կազմակերպվել է հանրային քննարկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ